

ՃԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Տնօրենութեան ստորագրութիւնն
է Գ. Վ. ՊԱՌՆԱՍՅԱՆ
Հանդիսի վերաբերեալ նամակիսմ գը-
րութիւն Տնօրենին պիտի ուղղուի իմամ
Ալի խան Կ. 13
Հրատարակի ամէն ամսոյ 1ին 11ին 21ին
Տարեկան գինն է 50 ղուրուշ:
Ծանուցման տողին 1 ղշ:
Դուրս երթալիք լրագիրներուն ծախքը
անսողին վրայ է:

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

ԻԶՄԻՐ Սիմոնաբեկեան Յարութիւն աղա
ՆԻԿՈՒՄԻՒԻԱ Մուրատեան Պ. Տ. աղա
ՊԱՐՏԻԶԱԿ Մինասեան Թորոս աղա
ՀԱԼԵՊ Գիւրգէնեան Յովնանէս աղա
ԿԱՐԻՆ Մարտիրոսեան Պետրոս աղա
ԱՐԱՐԳԵՐ Մամասեան Ճիզան աղա
ԵԳԻՊՏՈՍ Կարապետ. Պօղոս Էփէնտի
ՏՐԱՊԵԶՕՆ Մուրատ. Երզնկաբէկ աղա
ՔԵՐԱՍՈՆ Մազմանեան Գ. Խ. աղա
ՏՓԽԻՍ Կ. Հոնուստեանց Պետրոս աղա



ՏԱՍՆՕՐԵԱՅ ՀԱՆԳԵՍ

ՈՒՍՄԱՆՅ, ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԵՅԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՅ

ԴԹՈՒԹԻՒՆ, ՆԵՆԴՈՒԹԻՒՆ, ԱՆՓՈՒԹՈՒԹԻՒՆ

ԵՒ
ՈՃԻՐ

ԴԹՈՒԹԻՒՆ: Յոյնք՝ իւսքիւտարու մէջ բնաւ տեղ մը գե-
րեզմանատուն չունենալով բայց ի իւրեանց եկեղեցւոյն բա-
կէն, ասկէ ութսուն տարիի չափ առաջ պատահած Գեղար-
ատենը թէ մեռեալներուն թիւը օր քան զօր աւելնալով՝
եկեղեցւոյն բակը տեղ չը մնալը, եւ թէ արդէն իրարու
վրայ թաղուածներէն օգը ապականելով յառաջ գալիք
ֆլանները առիթ գտնելով, կ'աղաչեն զՀայերը որ մեռ-
եալներին այնպիսի դառնաղէտ օրերով մնչելու հեռաւոր
տեղերու գերեզմանոցները փոխադրելու մեծ դժուարու-
թենէն զիրենք ազատեն, Պաշար պաշէ գերեզմանատան
մէկ անկիւնը դէթ առժամանակեայ կերպիւ մեռելնին թա-
ղելու արտօնութիւն տալով:

Հայք իրենց բնական եղած մարդասիրութեամբը Յու-
նաց այս տառապալիւ վեհակին վրայ Գեղարատեան արտօ-
նութիւններն կը ջնորհեն. արտօնութիւն մը՝ զոր մինչև ցայ-
սօր կը վայելեն առանց ուրիշ բնաւ իրաւունք մը ունենալու
անոր վրայ՝ ըստ վկայութեան թէ Հայ ու Տաճիկ ծերունի-
ներու եւ թէ Սէլամըղի ու Եհնի մահալէի Թաղական
խորհրդոց: Մինչև հոս Հայոց եղբայրսիրական (Թերեւս
տարապայման) ԴԹՈՒԹԻՒՆԸ յայտնի կ'երեւի: Այլ որո՞ւ պի-
տի պատկանի արդեօք վերը խոշոր տառերով գրուած
նենԴՈՒԹԻՒՆԸ: Խնդրոյս արդէն տեղեակ եղող ընթերցողաց
համար խիստ դիւրին է հարցմանս պատասխանել, որոնք
Թերեւս աւելորդ իսկ համարեն այս պարագայներուն պատ-
մութիւնը, այլ մենք ընդհանրութեան կարեւոր կը կարծենք:

Չենք կրնար գիտնալ թէ Յոյնք այս արտօնութիւնը ինդ-
րած ատենին գերեզմանին մէկ մասը ք. 22-ն խօթելու խոր-
հուրդը նիւթած էին: Սա միայն ստոյգ է որ իրենց ջնորհ-
ուած տեղը, միշտ ընդարձակելու աշխատած են խորագիտու-
թեամբ և յաջողած միշտ սահմանուն մէկ մէկ քիչ դուրս մեռ-
եալներ թաղելով և երբեմն հին գերեզմանաբարեր եկեղե-
ցիէն բերելով գիշերանց նոյնպէս սահմանուն հեռու տեղ-
ուանք գետեղելով: « Եւ այս ամենայն սկիզբն էր երկանց »:
Յոյնք այսքանս մասամբ իւրը տեղերնին ընդարձակելու հա-
մար ըրին. այլ անոր բացարձակ տէրն ըլլալու համար՝ գերեզ-
մանի քարերէն աւելի խոշոր ապացոյց և անոնց վրայի Յունա-
կան տառերէն աւելի զօրաւոր փաստ ուղեցին գտնալ: Ուս-
տի խորհրդան շէնք մը կանգնել հոն և գիշեր ցերեկ բազմա-
թիւ գործաւորներ աշխատողներով ընդարձակ « Է » մը ու վը-
րան քարուկիր օրձարան մը շինեցին:

Այլ Հայք և մասնաւորապէս Թաղական խորհուրդը այս
ամենը տեսնելով ի՞նչ ըրին:

ԱՆՓՈՒԹՈՒԹԻՒՆ. անհոգութիւն

Այլ այժմ այս հատուածին համար միայն խորագիրը շատ
կը համարինք:

Արդ՝ անցելոյն վրայ այսքան տեսութիւն ունենալէ վերջը
ազնիւ ընթերցող վայրկեան մը եկու իմ հետ վերայիշեալ գե-

րեզմանատունը և տես կամ լսէ սակաւագէտ բարբարոսական
ՈՃԻՐ ՄԸ

Իւսքիւտար բնակող տողրամածի Պարոն անուն անձին
հինգ տարեկան դեռահաս տղան կը մեռնի Յուլիս ութը
չորեքշաբթի օրը զոր կը տանին իրենց սեփական: Թաղը Թա-
ղելու՝ ուր ամբողջուած կար իւր ընտանեաց անդամներէն շա-
տերուն ոսկերեւիքէն իզատ դեռ նոր մեռնող (մէկը ասկէ
տասնուհինգ օր եւ միւսը ամիս մը յառաջ) երկու զաւակացը
մարմինները: Յոյնք կը ժողուուն եւ չեն թողուր որ մեռեա-
լը թաղուի սրուարով թէ այս աշը մերն է և Հայ աշտեղ Դու-
թաղելու՝ Երատանս Կոնստին (. . .): Հայք քիչ մը դիմադրու-
թենէ վերջը Յունաց կողմանէ սպառնալիքներ լսելով Տեսու-
թեան կը դիմեն, ուսկից հաղորդապետ մը բաւական զօրով
անմիջապէս կը հասնի եւ Յոյները ցրուելով մեռելոյն նոյն
տեղը թաղուիլ կը հրամայէ. ննջեցելոյն մարմինը կամփոփ-
ւի և ամբողջը կը ցրուի: Այլ Յոյներուն ուղածն այս չէր:

Գիշերը ժամը Յին ճին միջոցները մերձակայ տուններուն
Հայ բնակիչներէն ոմանք գերեզմանատան մէջ անսովոր ձայ-
ներ լսելով հոն կը վազեն և կը տեսնեն քանի մը Յոյներ ու
ընդմէջ մէկը ուսը ճերմակ ծրար մը առած կը փախչին: Հա-
յերը ասոնք ճանչնալով հետաքրքրութեամբ ետենուն կը
վազեն. այլ անոնք ուսերնուն ծրարը գետինը ձգելով անե-
րեղթ կը լլնան: Հայերը ծրարին քով գառնալով կը տեսնեն
անկէնդան մարմին մը երկրի վրայ տարածուած որնոր առջի
օրուան թաղուած մանկիկին մարմինը ըլլալը կը ճանչնան: Այն
հրէշները, անմեղ արարածի մը անարարները իրեն յաւիտե-
նական հանգստութեան զրկելը բաւական չը համարելով
անհնչացեալ մարմինին վրայ չարաչար վերքեր ալ բացեր
էին . . . : Բաւանդելի՛ գործ: Անմիջապէս երկու թաղական
խորհրդոց այս խուժադուժ գործոյս լուրը հաղորդուելով
խորհրդականք և ժողովուրդը խուռն բազմութեամբ կը լեց-
ունին գերեզմանատունը մինչև առաւօտ և արդար ցասմամբ
այս անբարոյութեան վրէժը կը պահանջեն: Կէս օրէն ա-
ռաջ Տեսութեան դրան բժիշկ Ա. Թա Պէյը և Հայ մը . . .
բազմութիւն պապիկներով կուգան տղուն դիակը կը քննեն
և կը հրամայեն որ անմիջապէս թաղուի: Նոյն պատուէրը
կ'ըրկնէ նաև Հայք: Ժողովուրդը կ'ընդմանայ իրաւամբ կաս-
կածելով, որ եթէ այս հրամանին հնազանդին, իրենց նը-
ուիրական դատն ալ հոն կը թաղուի, . . . հրամանատուք
իրենց հրամանը սուրնով կ'ուզեն սրել . . . այլ կ'ստիպուին
իրեն անբռնաբարելի իրաւանց զէնքովը վառեալ: Ժողովը
դեան ուժէն ետ քաշուելու. Ժողովրդական ցասման վրայ
աղէկ դաղափար մը չը տանելով հետեւին:

Յետոյ Տեսութեան Դռնէն քննիչներ գալով, հասարակու-
թիւնն ալ Տ. Չայեանը կը հրաւիրէ որ տեսութեան կող-
մէն եկած բժիշկին հետ դիակը քննեն: Քննիչք մեռելահաս-
ները տեսնողներուն վկայութիւնը կ'արձանագրեն և բաղցրու-
թեամբ ժողովուրդը համոզելու կը ջանան որ տղան թաղուի.
նոյն յորդորը կը կրկնեն նաև երկու թաղերու թաղականք:
Այլ հասարակութիւնը անյողդող կը կենայ իւր պահանջման
վրայ, և դատաստան կնգէ քանի որ ոճրագործութեան ա-

ուարկան դեռ ձեռքերնին է . ուստի անմիջապէս ստակ հաւաքելով մարմինը զմուտէլ տալու կը պատրաստուի :

Մինչ այս մինչ այն Պատրիարքական նամակ մը կը հասնի Թաղական Աղաներուն որուն մէջ Ամենապատիւ Ս . Պատրիարք Հայրը , այս սոսկալի բարբարոսութեան վրայ զգացած ցասումը և ցաւը յայտնելէ վերջը կ'ապահովելընէր ժողովուրդը՝ որ Բ . Ղուռը անմիջապէս իմաց տրուած ըլլալով Վսեմ . Մեծ եպարքոսին կողմանէ յատուկ քննիչներ պիտի դան . որոնք ոճրագործաց խտիւ պատժուելուն փոխ պիտի տանին . 'ի վերջոյ կը յորդորէր որ դիակը ելած գերեզմանին մէջ նորէն Թաղեն , ըստ հրամանի Բարձր . Մեծ եպարքոսին :

Քիչ մը ետքը հասան Վսեմ . Հիւսէին , Մահմուտ և Մուսթաֆա Փաշայք և ուրիշ աստիճանաւորներ , բազմաթիւ հրացանաւոր հեծեալներով . որոնք եղելու թեանց վրայօք պէտք եղած տեղեկութիւնները ստանալէն վերջը յորդորէին ժողովուրդը որ տղայն Թաղեն ու ցրուին . նոյնը կը խնդրէին նաև Պատրիարքարանին կողմէն հասնող Գեր . Ներսէս Եպիսկոպոսը և Գարեգին վարդապետը : Այլ ժողովուրդէսն ամենափափուկ զգացումը չարաչար վերաւորուած էր : Թողմայ կը զոչէր «այս յետին բարբարոսութեան վերալից յիշատակը : Ինչ ապահովութիւն կրնա՞նք ունենալ որ մեր ամենասիրելի մերձաւորներուն ցամաքեալ ոսկորներն ալ այսուհետեւ նոյն անարգանքը չը պիտի կրեն » :

Մնացեալը հետեւեալ թաւով

ԹԱԳԱԿՅՈՒԹԻՒՆՔ

Մասնաւոր թղթակցութիւն ՍԷՐ հանդիսի :

. . . խմբագիր :

Պարտիզակի արդի ցաւալի տրամադրութեանը վրայ հետեւեալ տխուր տեղեկութիւնը ձեզ հաղորդելով , անոր ձեր հանդիսին մէջ հրատարակութիւնը կը խնդրեմ . յուսաւով որ Նիկիոմիդիոյ վիճակին Գեր . Առաջնորդ . Սրբազանը պիտի փութայ այն անպատեհութեան առջեւն առնուլ :

« Անցեալ տարի այս ատենները դպրոցը երեսի վրայ մնալով , մէկ քանի լուսաւորութեան բարեկամ Աղգայինք տեսնելով իրենց դպրոցին խեղճ վիճակը , միաբանեցան ընկերութիւն մը կազմել եւ դպրոցին հոգաբարձութիւնը վարել , մինչեւ որ Սահմանադրութիւնը գայ : Եւ որովհետեւ դպրոցն հայկաբան եւ դադղիաբան դաստաստի մը պէտքը ունէր , միաբան խորհուրդ ըրին ասոր վրայ , եւ հոգաբարձութեան մեծարդոյ անդամներէն մին յանձնարարական գրով Կ . Պօլիս զրկեցին անցեալ սեպտեմբեր ամսոյն մէջ , իրենց դպրոցին այն պէտքը լեցնելու համար , եւ որչափ որ կարելի էր , իրենց խորհրդոյն կատարմանը հասնելու յաջողեցան :

« Յայտնի է թէ հոգաբարձութեան նպատակն այն էր որ 'ի հարկէ քիչ ժամանակէն Սահմանադրութիւնը հոս ալ պիտի գայ . աւելի ազէկ է որ դաստաստ մը 'ի պատրաստի ունենամք այժմէն , որպէս զի Թաղական խորհուրդը կազմուածին պէս , դպրոցը անոր խնամատարութեամբը ուրիշ կարեւոր բարեկարգութիւններ ալ ընդունելով , եւ 'ի պատրաստի ունեցած միջոցով ալ այնուհետեւ աւելի լաւ վիճակ մը ունենայ , եւ մինչեւ որ Սահմանադրութիւնը եկաւ՝ Աղգասէր հոգաբարձութիւնը շարունակեց իւր անձնութիւնը 'ի փառս Աղգին :

« Կը սիրեմ՝ եռանդով ըսել , հոգաբարձութեան այս նպատակը արդարեւ գովելի էր ըստ ինքեան . եւ իւր Պարտիզակի դպրոցին մատուցած ծառայութիւնը բոլոր ազգիս շնորհակալութեանն արժանի . բայց աւաղ որ իւր գեղեցիկ նպատակը տակաւին չպսակուեցաւ :

« Գեր . Առաջնորդ Սրբազանը որ բաւական ժամանակ իւր ժողովուրդէն բացակայ էր Պատրիարքի տեղապահութեան պատճառաւ , Ապրիլի 7 ին Պարտիզակ եկաւ իւր օրհնութիւնը տալու իրեն հօտին , եւ նորա կարօտութիւնը լեցնելու համար :

« Այս առթիւ Նորին սրբազնութիւնը Թաղական խոր .

հրդոյ ընտրութիւն ըրաւ օրինաւորապէս սուրբ Եկեղեցւոյ մէջ . բայց ցաւալի է ըսել , որ նորակազմ Թաղական խորհրդոյ անդամաց մէջէն առաջին անգամ դպրոցին դէմ հաւաակողներ չպակսեցան . մէկը ըսաւ թէ « Ինչ պէտք են այսչափ վարժապետներ . միայն ա . ք . գ . սովորեցնող մը բաւական է . մեր պապուկները այսպէս անցուցած են , եւ բանի մը պակասութիւն չեն ունեցած . (անշուշտ իմացական լուսոյ) : Եւ ուրիշ մը երբ հարկ եղաւ վարժապետի ամսական հատուցանել , չկարմրեցաւ լսելու թէ « Ես եկեղեցիին արծաթէ կանթեղ չինել պիտի տամ ստակներով » : Անշուշտ կարծելով թէ նիւթական եկեղեցւոյն նիւթական լուսոյ զեղխութիւնը այնչափ հարկաւոր է որ , եթէ այն զեղխութեան պատճառաւ մտաց լուսոյ միջոցն ալ պակսի՝ հոգ չէ . քանզի տակաւին այնպիսիք կը հաւատան թէ հացով միայն կապրի մարդ . եւ հոգին մարմինէն առաւել չէ բնաւ . խեղճ մարդիկ :

« Հոգաբարձութեան Կ . Պօլսէն բերած դաստաստն այսպիսի հակառակ տրամադրութիւններ տեսնելով նոյն իսկ Թաղականաց մէկ քանի մէջ , որոց պարագն էր ըստ սահմանադրութեան ամենէն աւելի դպրոցին յառաջադիմութեանը ջանալ . իւր հրաժարականը մատուց Գեր . Սրբազանին : Նորին գերապատուութիւնը չընդունելով անոր հրաժարականը յորդորանօք եւ քաջալերութեամբ վերաւ հաստատեց զայն իւր պաշտօնին մէջ , եւ դպրոցին եկամտից մատակարարութիւնը Թաղականներէն մէկուն յանձնելով բանաւոր պատճառաւ մը մեկնեցաւ 'ի Նիկիոմիդիա :

« Որովհետեւ Նորին Սրբազնութիւնը Թաղականաց մէկ քանիին խաւարասիրական քիմքը չյարգեց , անոր մեկնելէն վերջը իրենց կողմանը հակառակ ուղեցին անտարբեր աչքը նայել իրենց ինամոցը յանձնուած դպրոցին , զայն բոլորովին երեսի վրայ ձգելով , եւ երեք ամիս է որ բնաւ նիստ ըրած չեն որ եւ իցէ Աղգային խնդրոյ կամ բարեկարգութեան մը համար : Չենք կրնար ուրանալ թէ Թաղականաց մէջ տղիտութեան թշնամի եւ լուսաւորութեան բարեկամներ չկային , բայց անոնք ալ իրենց մէկ քանի ընկերներուն դադափարաց անհամաձայնութեանը պատճառաւ մէկդի քաշուեցաւ : Եւ դպրոցը , որ բնաւ հասարակութեան քաւկին կարօտութիւն չունի , իւր նախկին հոգաբարձութեան զրկուած ըլլալով , եւ կարծեցեալ Թաղական խորհրդոյն անտարբերութեան եւ անհոգութեան երեսին խեղճ կացութեան մէջ է այսօր , եւ եթէ գէթ նոր հոգաբարձութիւն մը անոր օգնութեան չհասնի , քիչ օրէն քակուելու տխուր լուրը պիտի առնէք . վասն զի ամսականաց անմատակարարութենէն աւելի , Թաղականաց անտարբերութիւնը յուսահատեցուցած է վարժապետները : Ահաւասիկ Պարտիզակի Թաղականաց մատուցած ծառայութիւնը Աղգին անկնկալութեանը փոխարէն . . . » :

Ուստի այս տեղեկութիւնները Ձեզ հաղորդելով , Մեծարդոյ խմբագիր , 'ի դիմաց Աղգին հրապարակաւ կը խնդրեմք Գեր . Ս . Առաջնորդէն որ Աղգասիրտբար փութայ յիշեալ դպրոցին գէթ առ ժամն հոգաբարձութիւն մը կազմելու . որպէս զի Աղգին բարօրութեան միայնակ աղբիւրներէն մին չխափանի :

Ձեր բաժանորդներէն մէկը

1864. Յունիս 29

Կոստանդնուպօլիս

Կը ըսենք թէ Բ . Ղրան կողմանէ իւրաքանչեւ Ռոմի կանուլութեան հրաման եկեր է , որ Յունաց իմաց տան թէ՛ առժամանակեայ կերպով արգիլուած է իրենց տեղոյն դերեզմանատունը մեռել թաղել , մինչեւ որ դատերնին տեսնուի . որով Յոյնք նոյն օրը պատահած մեռեալ մը իրենց եկեղեցւոյն բակին մէջ թաղելու ստիպուեցին :

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Ա . ՃԷՎԱՀԻՐՃԵԱՆ

Կ . ՊՈԼԻՍ . Ա . ՀԱՄԱԶԳԻԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ